«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի

EduArmenia կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման

դասընթաց **2023**

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ինչպե՞ս ձևավորել արժեքային համակարգ սովորողների մոտ

Հետազոտող ուսուցիչ՝ Աստղիկ Հարությունյան

Դպրոց՝ Երևանի Կարեն Ասրյանի անվան հ. **171** հիմնական դպրոց

Բովանդակություն

Ներածություն.....3

Փաստագրության ներկայացում.....5

Գլուխ **1**.....6

Գլուխ **2**.....10

Եզրակացություն.....14

Օգտագործված գրականության ցանկ.....16

Ներածություն

Մոտեցումների և սահմանումների բազմատեսակության մեջ «արժեք» հասկացությունը պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի խմբի: Առաջին խմբում ներառված են հասկացություններ, որոնց հեղինակներն արժեքները դիտում են որպես կարծիք, պատկերացում կամ համոզմունք: Որպես այս ուղղության ներկայացուցիչ՝ կարելի է համարել Մ. Ռոկիչինին, ով արժեքները համարում է կայուն համոզմունք այն համատեքստում, որ վարքի որոշակի ձևը կամ գոյության վերջնական նպատակը նախընտրելի է անձնային կամ սոցիալական տեսանկյունից[1]:

Երկրորդ խմբում կարելի է ներառել այն սահմանումները, որոնց հեղինակները «արժեքը» (կամ «արժեքային կողմնորոշումը») սահմանում են որպես սոցիալական դիրքորոշումների կամ հետաքրքրությունների տարատեսակ կամ նմանատիպ երևույթ (Մ. Վեբեր, Ա. Զդրավոմիսլով, Դ.Ուզնածե): Դ.Ուզնածեն դիրքորոշումը մեկնաբանում է որպես անձի կամ խմբի սոցիալական փորձի միջոցով ձևավորված նախատրամադրվածություն սոցիալապես նշանակալի օբյեկտները ընդունելու և գնահատելու, ինչպես նաև որոշակի գործողություններին անձի կամ խմբի պատրաստվածությունը, որոնք ուղղված են սոցիալապես նշանակալի օբյեկտներին: Ա.Զդրավոմիսլովի կարծիքով՝ արժեքային կողմնորոշումները անձի դիրքորոշումներն են նյութական և հոգևոր մշակույթի արժեքների նկատմամբ: Մ. Վեբերը արժեքը մեկնաբանում է որպես այս կամ այն պատմական ժամանակաշրջանի դիրքորոշում, որպես դարաշրջանին հատուկ հետաքրքրասիրության ուղղություն:

Խնդրի ներկայացում

Այսօր հանրակրթության ոլորտում հասարակական հարաբերություններում տարբեր երևույթներ կորցնում են իրենց իսկական նշանակությունը: Այդ երևույթները (արժեքները) իմաստավորման և վերաիմաստավորման անհրաժեշտություն ունեն, թելադրված հասարակության բնականոն զարգացմանը և մարդկանց պահանջմունքներով:

Արժեքանության ոլորտում նորովի է կարևորվում այնպիսի ուղղության դերն ու նշանակությունը ինչպիսինն է մանկավարժական արժեքանությունն իր արժեքանական հիմնական կողմնորոշիչներով:

---

[1] Rokeach M., The Nature of Human Values, New York, The Free. Press, 1973.

Շատ կարևոր է իրական արժեհամակարգի ճիշտ ընկալման հիմնահարցերի լուսաբանումը, որով էլ պայմանավորված է շրջապատում իրական արժեքների նկատմամբ ճիշտ ու համարժեք վերաբերմունքի դրսևորումը: Վերջին ժամանակներում շատ կարևոր է վեր հանել արժեքի հատկանիշները, բացահայտել, արժեքի էությունը, արժեքաբանական ընկալումները, առանձնահատկությունները, հիմնական բնութագրիչները, հասկացություններն ու գիտական հիմնավորումները:

Ամենատարածված խնդիրը, որ նկատել եմ աշակերտների մոտ նոր արժեհամակարգի առկայությունն է: Օրինակ աշակերտների համար կարևոր է, թե իր դասընկերը ինչ արժեքի հեռախոս է օգտագործում, ինչպես է հագնվում, ինչպիսի հեղինակություն ունի:

Ամենատարածված խնդիրը դպրոցում աշակերտների միջև շփվելու ձևի փոփոխությունն է, որ սովորական զրույցի ընթացքում էլ իրար հետ ձեռք առնելով են շփվում և, երբ հարցնում ես ինչու են իրար հետ այդպես շփվում, ասում են, որ նորմալ է մենք միշտ էլ նույն կերպ ենք շփվում: Այս ամենին ականատես լինելով՝ հասկանում եմ, որ երեխաների արժեհամակարգը շատ փոխվել է՝ դա գալիս է առաջինը ընտանիքից և տվյալ միջավայրից, որտեղ հայտնվում է երեխան: Նրանց պետք է նոր արժեհամակարգի հետ ծանոթացնել, տալ ընտրության հնարավորություն:

Փաստագրության վերլուծություն

Ի՞նչ գիտեք ձեր հետազոտվող հարցի վերաբերյալ	Ո՞րն է խնդիրը	Ո՞ւմ հետ կարող եք խորհրդակցել	Հնարավոր լուծումները
Արժեքները ընդհանուր համոզմունքներ են, որ անհատն ունի այն ցանկալի նպատակների վերաբերյալ, որոնց պետք է ձգտել կյանքում: Արժեհամակարգային դաստիարակությունը կարևոր է աշակերտների ուսումնառության ընթացքում:	Սովորողների շրջանում արժեհամակարգային կրթության ապահովում, ժողովրդավարական արժեհամակարգերի ձևավորում:	Մանկավարժներ, աշակերտներ, ծնողներ:	Դասավանդման ընթացքում սովորողի մոտ արժեհամակարգի ձևավորում, ազատ դիրքորոշման արտահայտում: Ժողովրդավարական մոտեցում դասընթացի ընթացքում՝ կրոնական, ռասայական, մշակութային խտրականությունների բացառում:

ԳԼՈՒԽ 1.

Հասարակության մեջ տեսականորեն ամրագրված արժեքները վերաիմաստավորվում են մարդկանց առօրյա կյանքում: Այդ ամբողջ գործընթացի իրականացման մոդելը իմ պատկերացմամբ հետևյալն է.

- Պատմականորեն ձևավորված և սերնդեսերունդ փոխանցված արժեքների ամրագրումն ամենուր և հատկապես հանրակրթության ոլորտում:
- Արժեքների ճիշտ ընկալումը:
- Արժեքների իրացման համար երաշխիքների ապահովումը:

Տեսություն

Այսօր շատ կարևոր է կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման էության բացահայտումն ու զարգացումը:

Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման էության բացահայտումը մանկավարժական ներգործության տեսանկյունից ենթադրում է այդ գործընթացի դիտարկումը նրա բովանդակային բաղադրատարրերի ամբողջության մեջ: Ուսուցման պայմաններում արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացն երկկողմանի բնույթ ունի. այդ գործընթացի արդյունավետության վրա ազդում են և՛ արժեքների յուրացման նկատմամբ սովորողների մղումն ու ակտիվ գործունեությունը , և՛ այդ գործընթացը կազմակերպող ուսուցչի գործունեությունը:

Սովորողների մեջ արժեքային կողմնորոշումների ձևավորման իրականացման գործընթացի բովանդակային կողմը ներառում է նրանց հոգեկանում գերակա արժեքները, ինչպես նաև մանկավարժական ներգործության միջոցների համալիրը, որն ակտիվացնում է դպրոցականի՝ արժեքների յուրացմանը միտված գործունեությունը:

Ըստ Ս. Ի. Մասլովի կրտսեր դպրոցականների կողմից արժեքների յուրացումն իրականանում է երեք աստիճաններով.

Առաջին աստիճանը կապված է օբյեկտի հուզական ընկալման հետ. Սկզբում երեխան ցանկացած օբյեկտ ընկալում է հուզականորեն ՝ իր հուզական-զգայական ոլորտի մակարդակի համեմատ:

Երկրորդ աստիճանը կապված է ընկալվող օբյեկտի անձնական և հասարակական նշանակության գիտակցման հետ:

Երրորդ աստիճանում իրականանում է կրտսեր դպրոցականի արժեքային կողմնորոշումների մեջ արժեքի ներմուծման, այլ արժեքների հետ նրա հարաբերակցության միջոցով՝ ըստ հուզական անդրադարձի և անձի համար արժեքի նշանակության աստիճանի:

Տարրական դպրոցում ուսուցման բովանդակության մեջ արժեքների ընտրությունն ու ներմուծումն իրականանում են դրանց համակարգման հիման վրա[2]: «Ինչպես կեցության ձևերն ու միջոցները, այնպես էլ դրանց արժեքները, գոյություն ունեն անթիվ քանակով»- գրում է Ն.Օ. Լոսսկին[3] :

Ն. Ս. Ռոզովի կողմից փորձ է արվել մանրամասնորեն դասակարգել կրթության ոլորտի համար նշանակալի արժեքները[4]: Նա առանձնացնում է՝

- Մարդասիրական արժեքներ, որոնք վերաբերում են մարդու իրավունքներին և արժանապատվությանը:
- Սոցիալական արժեքներ, որոնք վերաբերում են առանձին մարդկանց և խմբերի փոխադարձ գործունեությանը քաղաքական, տնտեսական, իրավական ոլորտում:
- Մշակութային արժեքներ, որոնք վերաբերում են արվեստին, կրոնին, բարոյականությանը, ազգային և էթնիկ ավանդույթներին:
- Էկոլոգիական արժեքներ, որոնք վերաբերում են շրջապատող բնությանը, շրջակա միջավայրին:

Ս.Ի. Մասլովի կողմից առաջարկվում է տարրական կրթության բովանդակության հուզական-արժեքային բաղադրատարրերի յուրացման ընդհանուր դիտակտիկական մեթոդների այսպիսի համակարգ.

- ❖ Համարժեք հույզերի մեթոդ,

---

[2] Маслов С.И. Эмоционально-ценностное образование младших школьников /С.И. Маслов- Тула, Изд-во ТГПУ им. Л.Н. Толстого, 1999.

[3] Лосский Н. О. Ценность и Бытие. — М.: АСТ, 2000.

[4] Розов Н. С. Культура, ценности и развитие образования. М., 1992.

- Հույզերի և արժեքների շեշտադրման մեթոդ,
- Հուզական-արժեքային հակադրությունների մեթոդ:

Համարժեք հույզերի մեթոդն այն է, որ կրտսեր դպրոցականներին մղում է ուսումնասիրվող օբյեկտի նկատմամբ հուզական անդրադարձի և ճանաչողական գործունեության: Այն թույլ է տալիս արժեքային կողմնորոշումների ձևավորումն իրականացնել դրանց յուրացման առաջին աստիճանում:

Հույզերի և արժեքների շեշտադրման մեթոդը հնարավորություն է ընձեռում կրտսեր դպրոցականների կողմից գիտակցել յուրացվող արժեքների ճշանակությունը: Այն սովորողների կողմից իրենց ապրումների կամ ուսումնասիրվող օբյեկտի նկատմամբ դրական հարաբերությունների ձևավորմանն ուղղված տարբեր միջոցների կազմակերպումն է:

Հույզերի և արժեքների շեշտադրումն իրականացվում է արժեքների յուրացման գործընթացի երկրորդ աստիճանում, որտեղ արժեքների հուզական ընկալումն ամրապնդվում է սովորողների իմացաճանաչողական ոլորտի վրա ակտիվ ազդեցությամբ, որոնցից են հերբնչանքը, համոզմունքը, գնահատումը:

Քանի որ գործ ունենք աշակերտների հետ, հուզական ապրումները մեր աշխատանքի մեջ անպակաս են: Շատ կարևոր է, թե ուսուցիչը ինչ հույզեր է փոխանցում և ստանում:

Իմ սեփական փորձով կարող եմ ասել, որ շատ հաճախ կիսվում եմ աշակերտների հետ իմ տվյալ պահին առկա հույզերով, որոնք իհարկե բխում են տվյալ առարկայի թեմայից: Երբ անհրաժեշտ է լինում համեմատություններ տանել անցյալի և ներկայի միջև առանց էմոցիաների չի ստացվում:

Շատ հաճախ նկատել եմ, որ երբ իմ զինվորի մասին եմ պատմել, կամ ընդհանուր զինվորի կերպարի քննարկում եմ կատարել՝ ժամանակի ընթացքում հասկացել եմ, որ աշակերտներս ինձ հետ մտերմացել են, իմ ներկայությամբ և դասարանի առջև անկաշկանդ արտահայտել են իրենց կարծիքը և դիրքորոշումները: Նրանք տեսնելով, որ ես իրենց հետ անկաշկանդ զրուցել եմ ինձ տվյալ պահին մտահոգող խնդրի մասին, իրենք, նույնպես, կիսվել են իրենց անհանգստացնող խնդիրների մասին, թե առարկայի հետ կապված, թե առարկայի շրջանակներից դուրս:

Ինչ վերաբերվում է գործընկերներին՝ արժեհամակարգերի տարբերությունը շատ խիստ է զգացվում: Մի մասը, կարծես թե չի ցանկանում ընդունել, որ նոր սերունդը ունի իր արժեհամակարգը, պահանջները, և շատ հաճախ աշակերտներին ցանկանում են հարմարեցնել իրենց պատկերացումներին, որը հանգեցնում է կոնֆլիկտի ուսուցչի և աշակերտի միջև: Իհարկե կան մանկավարժներ, որոնք ժամանակին համընթաց են շարժվում և ընդունում են առկա փոփոխությունները, բայց ցավոք նրանք մեր դպրոցներում քիչ մասն են կազմում:

Եթե մենք ցանկանում ենք, որպեսզի մեր սովորողների մեջ ձևավորվի ճիշտ արժեհամակարգեր, ապա առաջին հերթին պետք է հասկանանք, որ արժեհամակարգի կրողն ենք այս պահին, այդ արժեհամակարգը նրանց ի նպաստ է, թե ոչ, և եթե տեսնում ենք խնդիր, փորձենք աշխատել այդ ուղղությամբ սեփական օրինակը ցույց տանք, ներկայացնենք տարբեր արժեհամակարգերի առավելությունները ու թերությունները, տանք ընտրության իրավունք աշակերտին:

ԳԼՈՒԽ 2.

Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ պատմություն և հասարակագիտություն առարկաների շրջանակներում սովորողների արժեհամակարգի ձևավորումը շատ կարևոր է: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի կերպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում:

Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն:

Շատ կարևոր է աշակերտին հերոսի համամարդկային արժեքը ցույց տալ: Օրինակ մեզ հետ կողք կողքի ապրում են ազգային փոքրամասնություններ, որոնք սովորում են մեր դպրոցներում, հայոց բանակում են ծառայում, շատերը ազգային հերոսներ են (Քյարամ Սլոյան), այսինքն չլինելով հայ՝ մեր ազգին են ծառայել և ծառայում: Ես շատ հաճախ՝ իմ դասերի ընթացքում, անդրադառնում եմ ՀՀ-ում ապրող ազգային փոքրամասնություններին՝ մասնավորապես եզդի ժողովրդին:

Միտտ բերում եմ եզդիական ջոկատի օրինակը, մեր հայրենիքի ամենադժվար պահերին մեր կողքին են եղել և լինում՝ մայիսյան հերոսամարտերից մինչև 2016 և 2020 թվականների պատերազմները և մինչ այսօր: Այս մասին խոսելը շատ կարևոր է աշակերտների մոտ վերաբերմունք ձևավորելու համար՝ այլ ազգին պատկանող աշակերտի նկատմամբ: Ես ականատես եմ եղել իմ դասավանդած դասարաններից մեկում, թե ինչպես է աշակերտներից թաքուն պահվել տվյալ աշակերտի եզդի լինելու փաստը, որպեսզի խուսաբեն, թե ծնողը, թե աշակերտը և դասղեկը խնդիրներից: Այս փաստը ինձ համար անընդունելի է, քանի որ երկու անձ ինքնակամ առանց մնացածի կարծիքը հաշվի առնելու որոշում են կայացրել, չպատկերացնելով, որ կարող է տվյալ ազգին պատկանող աշակերտին նիստ ներկայացնելով ոչ մի խնդիր էլ չառաջանար աշակերտների միջև, եթե խնդիր էլ լիներ հաստատ լուծման տարբերակներ կգտնվեին:

Ցույց տալ աշակերտին նաև հակառակը, թե հայերը ինչպիսի դեր են ունեցել համաշխարհային պատմության, մշակույթի, գիտության մեջ (Վ. Համբարձումյան, Հ. Բաղրամյան, Շ. Ազնավուր):

Այս բոլոր օրինակները բերելով՝ սովորողին տալիս ենք հնարավորություն անձամբ ընտրելու, իր սեփական դիրքորոշումը հայտնելու՝ ժողովրդավարության վերաբերյալ: Ազատ արտահայտելու սեփական կարծիքը, հանդուրժող լինելու՝ այլ ազգերի և նրանց դավանած կրոնի, մշակույթի, բարքերի, սովորույթների նկատմամբ:

Որպեսզի աշակերտների մոտ ձևավորվի արժեհամակարգ և վերաբերմունք, պետք է տվյալ առարկան դասավանդելուց՝ սովորողի մոտ ձևավորենք.

- Խոհեմություն
- Հետաքրքրասիրություն
- Քաջություն
- Ճկունություն
- Էթիկա
- Առաջնորդություն

Առաջինի դեպքում պետք է աշակերտի մոտ ձևավորվի իմաստություն, ինքնագիտակցություն, ինքնաիրականացում, դիտարկում, արտացոլում, գիտակցություն, կարեկցանք, երախտագիտություն, հոգատարություն, տեսլական:

Երկրորդի դեպքում՝ բաց մտածողություն, հետախուզում, կիրք, ինքնորոշում, մոտիվացիա, նախաձեռնություն, նորարություն, խանդավառություն, զարմանք, գնահատանք:

Երրորդի դեպքում՝ վճռականություն, տոկունություն, վստահություն, համառություն, եռանդ, լավատեսություն, ոգեշնչում, էներգիա:

Չորրորդի դեպքում՝ ճարպկություն, ինքնակարգապահություն, ջանք, աշխատասիրություն, նվիրվածություն, ինքնատիրապետում, վստահություն, կայունություն:

Հինգերորդի դեպքում՝ բարեգործություն, մարդասիրություն, ազնվություն, հարգանք, արդարություն, բարություն, ներառականություն, հանդուրժողականություն, ընդունում, հավատարմություն:

Վեցերորդի դեպքում՝ պատասխանատվություն, հաշվետվողականություն, հուսալիություն, ինքնորոշում, ոգեշնչում, կազմակերպվածություն, մենթորություն, նվիրվածություն, հերոսություն, խարիզմա, ներգրավվածություն, ղեկավարում, կենտրոնացում, կողնորոշում:

Ռազմավարություն

Արժեհամակարգի ձևավորման և դիրքորոշման արտահայտման համար՝ սովորողին հարկավոր է ապահովել հետևյալը.

- Ողջունող միջավայր,
- Ազատ կարծիքի արտահայտում,
- Անկաշկանդ շփում,
- Ստեղծագործական ազատություն,
- Ռասայական խտրականության բացառում,
- Քննադատական մոտեցում,
- Հանդուրժողականություն շփման մեջ,
- Ժողովրդավարական գաղափարների ներկայացում,
- Ազգային, հայրենասիրական գաղափարախոսության առկայություն:

Առաջարկություններ

- Ես առաջարկում եմ, որ մեր դպրոցներում դասավանդման ընթացքում.

- Առավել շատ ուշադրություն դարձնել մեր կողմից ապրող ազգային փոքրամասնությունների երեխաներին, զերծ մնալ պիտակավորումներից:
- Մշակութային փոխըմբռման և փորձի փոխանակման պատրաստակամություն:
- Նյութի բազմակողմանի ներկայացում պահելով՝ ժողովրդավարական մոտեցումը:

Եզրակացություն

Սույն աշխատանքը վերնագրված է «Ինչպե՞ս ձևավորել արժեքային համակարգ սովորողների մոտ»: Այն բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Այս աշխատանքը գրելուց իմ առջև խնդիր էի դրել ուսումնասիրելու՝ արժեհամակարգի ձևավորումը սովորողների մոտ, համեմատելու ներկա արժեքները՝ նոր ձևավորվող արժեքների հետ:

- Ներկայացնելով մի շարք մանկավարժների կարծիքները, փորձելով դրանք հետագայում կիրառել դասապրոցեսի մեջ: Փորձել եմ ներկայացնել մի շարք արժեքների կարևորությունը, մասնավորապես ազգային արժեքների պահպանումը և դրանց ճիշտ ներկայացումը՝ առանց ավելորդ պաթոսի:
- Ուշադրություն եմ հրավիրել իմ հետազոտական աշխատանքի մեջ ազգային փոքրամասնություններին վերաբերվող խնդիրներին:

- Ներկայացրել եմ գործընկերների արժեհամակարգի հետ կապված հարցեր:
- Սեփական օրինակներով ճշել եմ, թե ինչպես կարող են թե աշակերտը, թե ուսուցիչը ձեռք բերել նոր արժեքներ, վստահել միմյանց, հասնել նրան, որ դասարանում ձևավորվի ողջունող միջավայր: Որտեղ աշակերտները չեն վախենում իրենց կարծիքը հայտնելուց՝ ազատ խոսում են իրենց նախընտրելի արժեքների մասին:

Այսպիսով այս աշխատանքը գրելուց՝ հաշվի եմ առել իմ նախկինում առկա փորձը:
Թեման բավականին արդիական է, մանավանդ, որ սեպտեմբերից նոր չափորոշիչով արժեհամակարգի ձևավորումը՝ կարևոր է լինելու դասավանդման ընթացքում:

Գործնականում ինչպես կարող ենք այս ամենը ապահովել.

- Համապատասխան միջավայրի ապահովում,
- Ժողովրդավարական գաղափարների բազմակողմանի ներկայացում,
- Քննադատական կարծիքի ձևավորում,
- Ռասայական հանդուրժողականություն,
- Հուզական ֆոնի առկայություն,

- Խոսքի ազատություն,
- Սեփական օրինակով արժեքների ներկայացում:

Այս բոլոր թվարկածս կետերի առկայության դեպքում՝ մենք կարող ենք սովորողների մոտ ձևավորել արժեհամակարգ: Դպրոցը ավարտելուց հետո աշակերտի մոտ, եթե առկա է ձևավորված արժեքներ և դիրքորոշում, մենք կունենանք ՀՀ քաղաքացի՝ ով համարձակ է, տեղեկացված, ազատ արտահայտում է իր կարծիքը, անտարբեր չէ, ընդունակ է հաղորդակցվել այլ մշակույթին պատկանող մարդկանց հետ, գնահատում է ժողովրդավարության կարևորությունը մեր կյանքում, հանդուրժողական է, և նաև ազգային արժեքների կրող է:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ.:
2. Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986թ.:
3. Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ.:
4. Ա. Ե. Օլշաննիկովա, Հույզեր և դաստիարակություն, Երևան, 1985թ.:
5. Մանասյան Ն., Հանրակրթության արժեքային համակարգը, «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2004թ.:
6. Маслов С.И. Эмоционально-ценностное образование младших школьников /С.И. Маслов- Тула, Изд-во ТГПУ им. Л.Н. Толстого, 1999.
7. Лосский Н. О. Ценность и Бытие. — М.: АСТ, 2000.
8. Розов Н. С. Культура, ценности и развитие образования. М., 1992.
9. Яницкий М. С., Ценностные ориентации личности как динамическая система. Кемерово: Кузбассвузиздат, 2000.
10. Rokeach M., The Nature of Human Values, New York, The Free. Press, 1973.